

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ ԱՇՈՏԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա.Շ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գ.Մ.Բաղիրյան

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա.Ս. Հայրապետյան

Առաջատար կազմակերպություն՝

**Հայաստանի Հանրապետության
Ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի մարտի 18-ին, ժամը 16:00-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թվականի փետրվարի 16-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**

Ա. Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար ինքնիշխանությունը պետության հիմնական բնութագրիչների համակարգում դիտարկվում է առաջինը հավասարների շրջանակում: Դա վերաբերում է նաև ՀՀ Սահմանադրությանը, որի 1-ին հոդվածը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունք՝ ինքնիշխանությունն առավել ընդհանուր ու երակետային է, քանի որ արտահայտում է պետական իշխանության ներքին գերակայությունն ու լիիշխանությունն և արտաքին անկախությունը, որն էական է պետության կազմակերպման ու գործունեության համար:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական հիմնարար առ սեօռունտ հռչակվում էր նաև հռոհոռոսի օտենադրությամբ, այնուամենայնիվ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագրով և Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությամբ (2005 և 2015 թվականների փոփոխություններով) ինքնիշխանությունը նորովի դիտարկվեց ու ընկալվեց որպես սահմանադրական հիմնարար արժեք սահմանադրական այլ արժեքների համակարգում: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի տրամաբանության շրջանակում Հայաստանի Հանրապետության որպես իրավական պետության հռչակումն ենթադրում է, որ ինքնիշխան և իրավական պետության հարաբերակցությունն ինքնին մատնանշում է որոշակի սկզբունքների ու հատկանիշների առկայություն, որոնք կարող են հնարավորություն տալ բացահայտել հենց ինքնիշխանության ոչ միայն իմաստը, բովանդակային սահմաններն ու դրսևորման բնութագրիչները, այլև տարանջատել սահմանադրաիրավական այլ երևույթների նշանակությունից:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ է մեթոդաբանական նոր մտնեցումներ ցուցաբերել պետության ինքնիշխանության որպես իրավական երևույթի հետազոտության ժամանակ: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգավորումների արդի զարգացումների շրջանակում ինքնիշխան պետության սահմանադրական սկզբունքն էական զարգացում է ստացել ընթացիկ օրենսդրությամբ: Հետևաբար, պետության ինքնիշխանության իրականացման հարցերն անհրաժեշտ է տեսականորեն իմաստավորել հատկապես պետության ինքնիշխան իրավունքների նորմատիվային ամրագրման տեսանկյունից:

Պետության ինքնիշխանության սկզբունքի ամրապնդմանը զուգընթաց «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» և «ազգային ինքնիշխանություն» եզրույթների իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառնությամբ դերակատարությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների, և, չնայած ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են դրույթներ ինքնիշխանության առնչությամբ, այնուամենայնիվ, ոչ միանշանակ կերպով է ընկալվում այդ հասկացությունների սահմանադրաիրավական իմաստը:

Այդուհանդերձ, արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եության իմաստավորումը, դրա իրավական բովանդակության սահմանումը անհրաժեշտ են պետության ներքին և արտաքին գործունեության արդյունավետության բարձրացման համար համապատասխան երաշխիքների ձևավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի ու ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտական հետազոտման մշակման նպատակով:

Վկայակոչված հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը ևս վկայում է առենախոսության թեմայի արդիականության մասին:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի շրջանակներում արմատավորված տեսական մոտեցումների արդյունքում առաջ է եկել նաև «ինքնիշխանություն» եզրույթի վերաբերյալ շփոթ՝ պայմանավորված այդ հասկացության բովանդակային ու գործառնությանն նշանակության և դրա բնութագրիչների «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» ու «ազգային ինքնիշխանություն» եզրույթների բովանդակային տարրերի միախառնումով:

Բացի այդ, նկատվում են նաև «պետական ինքնիշխանություն» և «պետության ինքնիշխան իրավունք» հասկացությունների ձևախեղման միտումներ, ինչի արդյունքում առաջ է եկել նաև ինքնիշխանության բովանդակային սահմանների ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Այսպիսով, ինքնիշխանության գործառնությանն դերակատարության ուղղությունների զարգացումները, ինքնիշխանության բովանդակային սահմանների ձևախեղումները, հայրենական իրավական համակարգում ինքնիշխանության միասնական իրավական մոտեցումների բացակայությունը, ինքնիշխանության որպես քաղաքական ու իրավական երևույթների թերի իրավաբանական, Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորումների տեսանկյունից նախանշվող նոր իրողության խնդիրները պահանջում են համակարգված լուծումներ, ինչն էլ վկայում է ատենախոսության ընտրված թեմայի արդիականության մասին:

Ատենախոսության հետազոտության օբյեկտը կազմում են պետության ինքնիշխանության ու ինքնիշխան իրավունքների երաշխավորման ընթացքում առաջացող և քաղաքական ու իրավական համակարգերի ձևավորման հետ առնչվող հարաբերությունները, ինչպես նաև միջազգային իրավական և սահմանադրական այն կառուցակարգերը, որոնք վերաբերում են պետության ինքնիշխանության սահմանադրական արժեքանությանը, Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգավորումների բովանդակությունից ենթադրվող պետության ինքնիշխանության իրականացման հիմնահարցերին:

Հետազոտության առարկան հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետության ինքնիշխան իրավունքների իրականացման, այդ թվում՝ 2005 ու 2015 թվականներին սահմանադրական կարգավորումների ընթացքում առկա հիմնախնդիրների տեսական-իրավական վերլուծության արդյունքները և սահմանադրական արդարադատական պրակտիկան, ինչպես նաև պետության ինքնիշխանության լիարժեք երաշխավորմանը համարժեք լուծումների ու գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել հասարակական և քաղաքական կյանքի զարգացմանը գուզընթաց ինքնիշխանության բովանդակային փոփոխությունների, դրանցով պայմանավորված՝ պետության ինքնիշխանության դրսևորման նոր ձևերի ու դրա երաշխիքների միջոցով հայրենական իրավական համակարգում ինքնիշխանության սահմանադրաիրավական կարգավորումների առանձնահատկությունները և դրանց տրամաբանության լույսի ներքո առաջադրել ինքնիշխանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման առնչությամբ ծագող հիմնախնդիրների այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արժեքանության ոգուն համահունչ պետական, ժողովրդական և ազգային ինքնիշխանության լիարժեք երաշխավորմանը:

Հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու նկատառումով աշխատությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները

- որոշել ինքնիշխանության եզրույթի տեղն ու դերը սահմանադրական իրավունքի գիտության մեջ հաշվի առնելով իրավական այդ կատեգորիայի վերաբերյալ առկա գիտական տարբեր պատկերացումների զարգացման դինամիկան,
- հիմնավորել ինքնիշխանության առանցքային նշանակությունը սահմանադրական իրավունքի համակարգում և բացահայտել միջազգային ինտեգրմանն ու աշխարհաքաղաքական գործընթացների խորացմանը գուզընթացի հայտ եկած պետության ինքնիշխանության բովանդակային փոփոխությունները, դրանցով պա-

մանավորված՝ ինքնիշխանության գործառնության ղերակատարումը ներկայիս իրավաբանական պայմաններում,

- հետագոտել ու սպառնչ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության որպես քաղաքական և իրավական երևույթի իրավաբանական հիմնախնդիրները, բացահայտել այդ ինստիտուտի նշանակությունը զարգացման հեռանկարները և 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների համատեքստում,

- համակարգված տեսքով ներկայացնել ինքնիշխանության որպես սահմանադրական ինստիտուտի սկզբունքները և հատկանիշները, ուսումնասիրել վերջիններին բովանդակային նշանակությունն ու առանձնահատկությունները,

- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության բնութագրիչները և գործառնության նշանակությունը սահմանադրաիրավական ժամանակակից ընկալման պայմաններում,

- բնորոշել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքները և բացահայտել դրանց իրացման սահմանադրական կառուցակարգերը, օրենսդրական հիմնախնդիրներն ու դրանց զարգացման արդի միտումները ներկայիս սահմանադրական բարեփոխումների համատեքստում,

- բացահայտել ինքնիշխանությունը սահմանադրական իրավունքի գիտության համակարգում. ժողովրդական, ազգային ու պետական ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծումներ,

- անցկացնել համալիր հետազոտություններ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների բովանդակային սահմանների և դրանց իրագործման հիմնախնդիրների առնչությամբ,

- ուսումնասիրել պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերաբերակցության հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները սահմանադրական արդարադատության պրակտիկայում,

- ինքնիշխանության հիմնախնդրի համատեքստում ուսումնասիրել մարդու իրավունքների սահմանադրական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում,

- հետագոտել ինքնիշխանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում կատարելով տեսական-իրավական վերլուծություն պետության ինքնիշխանության բովանդակային սահմանների հստակեցման առնչությամբ:

Ասեռնախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:

Ինքնիշխանության սահմանադրաիրավական հետազոտության հիմնախնդիրները, դրա սկզբունքների, հատկանիշների, բնութագրիչների ու երաշխիքների վերաբերյալ ուսումնասիրություններն էսպես սակավ են: Չնայած այն հանգամանքին, որ տարաբնույթ ասպեկտներով դրանք մշտապես գտնվել են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան իրավագետների ու քաղաքագետների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, դրանց հետազոտումը սահմանադրական կարգավորումների համատեքստում դեռևս համակարգված բնույթ ձեռք չի բերել:

Հետազոտության առարկա հարցադրումներն որոշակիորեն ուսումնասիրվել են օտարերկրյա իրավագետների կողմից, սակայն, ինքնիշխանության հիմնահարցերի առնչությամբ միանշանակ մոտեցում այդպես էլ չի ձևավորվել, ավելին, ինքնիշխանության բովանդակային սահմանների հիմնահարցը ընդհանրապես չի քննարկվել մասնագիտական գրականության շրջանակներում:

Հայրենական իրավագիտության շրջանակներում ուսումնասիրվել են սույն հարցադրումների միայն առանձին կողմեր, իսկ ՀՀ իրավական համակարգում ինքնիշխանության հայեցակարգային հսկայությունները, ինչպես նաև սահմանադրաիրավական երաշխիքներն ու դրանց իրացման հիմնահարցերը ընդհանրապես չեն ուսումնասիրվել: Բացակայում են ուսումնասիրություններ նաև ինքնիշխանության երաշխավորման ու պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման միտումների առնչությամբ:

Պետության ինքնիշխանության բովանդակության ու բնութագրիչների տեսական-իրավական վերլուծության, դրա սկզբունքների, հատկանիշների, երաշ-

խիբների, ինչպես նաև պետության ինքնիշխան իրավունքների հետ հարաբերակցության և նմանաբնույթ այլ հարցերի գիտական հետազոտության առնչությամբ մեծ ներդրում ունեն հայ իրավագետներ Ն.Ա. Այվազյանը, Ս.Ա. Ավակյանը, Ա.Հ. Երիցյանը, Գ.Բ. Դանիելյանը, Ռ.Վ. Ենգիբարյանը, Է.Վ. Թաղևոսյանը, Հ.Ս. Խաչատրյանը, Լ.Ս. Կարապետյանը, Ա.Շ. Հարությունյանը, Գ.Գ. Հարությունյանը, Գ.Ս. Ղազիկյանը, Վ.Ռ. Նազարյանը, Գ.Հ. Սաֆարյանը, Վ.Վ. Ստեփանյանը և այլոք: Վերջիններիս գիտական եզրահանգումներն ու նկատառումները մեծարժեք են, ուստի դրանք ևս հանգամանորեն ուսումնասիրվել և նկատի են առնվել սույն աշխատանքում:

Թեմայի առանձին հարցադրումներ բացահայտված են նաև միջազգային կազմակերպությունների գեկոյցներում, բանաձևերում և այլ իրավական փաստաթղթերում:

Բնականաբար, սույն աշխատանքի տեսական հիմք են ընդունվել նաև օտարերկրյա ճանաչված իրավագետների հետազոտությունները, որոնց շարքում կարելի է առանձնացնել Մ.Վ. Բագլայի, Ա.Ա. Բեգուզովայի, Ա.Ա. Բելկինայի, Ն.Բ. Գրաչյովի, Ն.Վ. Վոևոդինայի, Վ.Ա. Դորոգինայի, Վ.Դ. Զորկինի, Ե.Բ. Կոզլովի, Օ.Ե. Կուտաֆինի, Մ.Բ. Կուկուշկինի, Վ.Օ. Լուչինի, Ի.Դ. Լևինայի, Վ.Վ. Նևինսկու, Յու.Ա. Տիխոմիրովի, Պ.Բ. Սավինցու, Բ.Ս. Էրզևի, Բ.Ս. Շևցովի, Ս.Ն. Մարչենկոյի, Վ.Ի. Զիրկինի և այլոց գիտական աշխատությունները:

Բացի դրանից, քանի որ ինքնիշխանության հիմնախնդիրներն ունեն ընդհանուր աղերսներ միջազգային իրավունքի հետ, ուստի հետազոտության տեսական հիմք են հանդիսացել նաև այդ ոլորտի հայտնի իրավագետներ, մասնավորապես, Վ.Հ. Հովհաննիսյանի, Վ.Վ. Քոչարյանի, Է.Կատելյայի, Վ.Գ. Վիշնյակովայի, Վ.Է. Գրաբարի, Գ.Վ. Իգնատենկոյի, Վ.Ա. Կարտաշևի, Ա.Ա. Մոխեսևի, Ս.Վ. Չերնիչենկոյի և այլոց աշխատանքները:

Ատենախոսության աղբյուրագիտական և նորմատիվաիրավական հիմքը:

Ատենախոսության համար նորմատիվաիրավական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2005 և 2015 թվականների փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև աշխատանքի հիմնական դրույթներին վերաբերող հայ իրավական հուշարձանները և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերը:

Միաժամանակ, հետազոտության ժամանակ լայնորեն կիրառվել են պետության ինքնիշխանությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերը, միջազգային դատարանների դատական ակտերը, միջազգային կազմակերպությունների ու դրանց խորհրդակցական մարմինների՝ հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող ակտերը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների հիմնական օրենքներն ու ընթացիկ օրենսդրությունը:

Վերլուծությունների հիմքում դրված են ինչպես վերջին տարիներին մշակված ու շրջանառության մեջ դրված սահմանադրական փոփոխությունների նախագծեր, այնպես էլ այնպիսիք, որոնք մերժվել են: Որոշ դեպքերում ուսումնասիրվել են նաև սահմանադրական բարեփոխումների առնչությամբ պատրաստված պաշտոնական մեկնաբանությունները, միջազգային փորձագետների եզրակացությունները և այլն:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը:

Հետազոտության ընթացքում հնարավորինս համամասնորեն կիրառվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, դիալեկտիկական, պատմական) մեթոդները: Հետազոտության ընթացքում լայնորեն օգտագործվել է համեմատական իրավական մեթոդը:

Այս մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել ընտրված օբյեկտը համակողմանի ու ամբողջական հետազոտելու համար, մասնավորապես, համեմատական իրավական մեթոդի օգտագործմամբ վերլուծվել են մեր երկրի և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից ինքնիշխանության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առաջադրված ընդհանուր լուծումները, բացահայտվել են «ինքնիշխանության» եզրույթի նորովի ընկալման ու

կիրառման միտումները, ինչպես նաև հայրենական իրավական համակարգում «պետության ինքնիշխանություն», «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն», «ազգային ինքնիշխանություն», «պետության ինքնիշխան իրավունքներ» և «ինքնիշխանության երաշխիքներ» եզրույթների իմաստային նշանակությունն ու բովանդակային սահմանները, արձանագրելով ինքնիշխանության միասնական հայեցակարգի բացակայության և, որպես դրա հետևանք ինքնիշխանության սահմանադրաիրավական երաշխիքների ոչ արդյունավետ իրացման փաստը սահմանադրական բարեփոխումների գործընթացում:

Ստենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Աշխատանքում «ինքնիշխանություն» եզրույթը դիտարկվել է որպես համալիր ուսումնասիրության առարկա՝ իր պատմական զարգացման համատեքստում և ինքնիշխանության պաշտպանության սահմանադրաիրավական կառուցակարգերի իրացման հիմնախնդիրների լույսի ներքո: Հետազոտման առարկա է դարձել նաև ինքնիշխանության բովանդակային սահմանների հիմնահարցը, բացահայտվել են դրանց ձևախեղման արդի մարտահրավերները, ինչպես նաև հիմնավորվել է այդ սահմանների սահմանափակ բնույթը: Աշխատանքի շրջանակներում բացահայտվել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տարբեր պատմական ժամանակահատվածներում իր գործառնության ղեկավարումով, հիմնավորվել են «ինքնիշխանության» անմիջական գործողության և պաշտպանության հիմնական հնարավոր ուղղությունները:

Աշխատանքի շրջանակներում հետազոտվել է ինքնիշխանության սահմանադրական կարգավորումների հայրենական հայեցակարգը, բացահայտվել վերջինիս արմատական հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները: Ուսումնասիրվել են նաև ինքնիշխանության սահմանադրաիրավական կառուցակարգերի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների շրջանակներում: Աշխատանքում բացահայտվել են ինքնիշխանության պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման արդի միտումները:

Արդյունքում՝ կատարվել են ոչ միայն տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են ինքնիշխանության ապահովման ու երաշխավորման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործման մի շարք գործուն առաջարկություններ:

Ստենախոսությունում կատարված հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, տեսական հիմնադրույթներ և բնդհանրացված առաջարկություններ, որոնք հանդիսանալով **գիտական նորույթ**, հանգում են հետևյալին.

1. Ստենախոսությունում համակարգված տեսքով ներկայացնելով քաղաքական և իրավաբանական ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները, հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ դրանց փոխադարձ կապը պայմանավորված է այդ եզրույթների դիալեկտիկ միասնությամբ, որտեղ ինքնիշխանությունն արտահայտվում է իրավաբանական և քաղաքական կողմերի միասնությամբ, ինչը նշանակում է, որ ինքնիշխանության իրավաբանական կողմը չի կարող գոյություն ունենալ առանց իրական քաղաքական հիմքերի, կամ հակառակը, պետությունը ինքնիշխան չէ, եթե առնվազն սահմանադրական կարգավորումներով չի երաշխավորվում քաղաքական իշխանության և նրա մարմինների համակարգի ինստիտուցիոնալ գերակայությունը:

Աշխատությունում հիմնավորվել է նաև այն գաղափարը, որ պետության ինքնիշխանությունն ունի քաղաքական-իրավական բնույթ, բնդ որում, մի կողմից, այն բնութագրվում է որպես պետության իրական, անհրաժեշտ ու որոշիչ հատկանիշ, իսկ մյուս կողմից, նրա քաղաքական ինքնիշխանությունը դիտարկվում է իբրև պետական իշխանության կամքի ինքնուրույն դրսևորում, որն արտահայտվում է պետության ինքնիշխան իրավունքների, այդ թվում՝ նրա մարմինների լիազորությունների իրացման հնարավորությամբ:

2. Բացահայտելով ինքնիշխանության՝ որպես պետության առանձնահատուկ հատկանիշի բովանդակության հիմնահարցերը, հետազոտության արդյունքներով առաջարկվել է ինքնիշխանության եզրույթի հետևյալ բնորոշումը. այն ընկալվում է որպես իշխանության իրավագործություն կրելու փաստացի հիմք ու դրա իրականացման իրական հնարավորություն և բնութագրվում է մեկը մյուսի հետ փոխկապակցված ու մեկը մյուսին փոխարացնող հատկանիշների գերակայություն կամ գերագույն իշխանության առկայության և ինքնուրույնության կամ արտաքին անկախության միասնությամբ, ինչը նշանակում է, որ ա) առանց սեփական գերագույն իշխանության, պետությունը չի կարող լինել անկախ միջազգային հարաբերություններում, բ) առանց անկախության գոյություն չունի պետական իշխանության գերակայություն:

3. Ինքնիշխանության սկզբունքների ու հատկանիշների փոխգործակցության հիմնախնդիրների համատեքստում աշխատանքում հիմնավորված են համարվում հետևյալ եզրահանգումները, որ, ա) պետական ինքնիշխանության նկատմամբ ժողովրդական ինքնիշխանության առաջնայնության սկզբունքի իրացման պարագայում չի կարող ժողովրդի իշխանությունը հակադրել պետությանը, որը տեսականորեն նույնպես անհնարին է, բ) միջազգային իրավունքը ոչ թե սահմանափակում է պետության ինքնիշխանությունը, այլ միայն դրա իրականացումը, ինչը նշանակում է, որ միջազգային իրավական նորմերով ինքնիշխանության սահմանափակության տարրերի ամրագրմամբ պետությունը իրականացնում է իր անսահմանափակ ինքնիշխանությունը և իշխանություն կրողի կամքը:

4. Ատենախոսությունում միանգամայն նորովի են ներկայացվել «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» ու «ազգային ինքնիշխանություն» հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց իրացման ուղիները: Ըստ ատենախոսության հիմնավորված է համարվում այն դիրքորոշումը, ըստ որի պետական ինքնիշխանությունն ունի անանցյալ բնույթ, սակայն, եթե պետական իշխանության մեջ արտահայտվում է ողջ ժողովրդի ու պետության կամքը, ապա ժողովրդի ինքնիշխանությունն իրենից ներկայացնում է ժողովրդի կողմից պետական ողջ իշխանության իրավաբանորեն ու փաստացի տնօրինում, քանի որ ժողովուրդն է հանդես գալիս իբրև այդ իշխանության միակ աղբյուրն ու կրողը:

Միաժամանակ, հիմնավորվել է այն գաղափարը, որ այդ հասկացությունները բովանդակային առումով համարժեք չեն, սակայն դրանք սերտորեն փոխկապված են ու փոխգործակցում են միասնական համակարգում, և այդպիսի միասնականությունն ենթադրում է, որ ինքնիշխանության սուբյեկտն ու կրողը միաժամանակ հանդիսանում են ժողովուրդը, ազգը, պետությունը:

5. Ատենախոսությունում պաշտպանություն է ներկայացվել այն եզրահանգումը, որ պետությունն իր ինքնիշխան իրավունքները տիրապետում է սեփական կամքով, այլ ոչ թե որևէ պետության կամ այլ սուբյեկտի որոշմամբ, ինչը նշանակում է, որ, մի կողմից, ինքնիշխան իրավունքներ կարող է կրել այն պետությունը, որն ինքնուրույն սահմանում է սեփական իրավական կարգավիճակը, մյուս կողմից, պետության ինքնիշխան իրավունքներն ընկալվում են որպես պետության ինքնիշխանության իրավաբանական բովանդակության տարր:

Այդ եզրահանգման համատեքստում և ելնելով հետազոտության արդյունքներից առաջարկվել է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների հետևյալ բնորոշումը, որ դրանք ընկալվում են պետության այնպիսի իրավունքներ ա) որոնք ձեռք են բերվել սեփական կամքով, բ) մարմնավորում են պետական իշխանության անկախության և լիիշխանության իրացումը, գ) որոնց ցանկը անսպառ է, դ) պատմական որոշակի ժամանակաշրջանում հայ ժողովրդի պահանջմունքներով է կանխորոշվում այս կամ այն իրավունքի առկայությունը:

6. Ատենախոսությունում, համակարգված տեսքով ներկայացնելով պետության ինքնիշխանության երաշխիքների բովանդակությունն ու գաղափարական հիմքերը, առաջարկվել է այդ եզրույթի հետևյալ բնորոշումը, որ դրանք ընկալվում են որպես ինքնիշխանության պահովման այնպիսի միջոցներ, որոնց միջոցով պետությունը կանխարգելում կամ չեզոքացնում է իր ինքնիշխանության դեմ ուղղված հնարավոր

կամ իրական սպառնալիքները: Միաժամանակ, աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության իրավական, քաղաքական, հոգևոր և տնտեսական երաշխիքների ապահովումն ունի այն նույն նշանակությունը, ինչ պետության ինքնիշխանության իրավական բովանդակությունը:

7. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրների առնչությամբ կարևորել այն դիրքորոշումը, որ պետությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ իր ինքնիշխանությունը փոխանցել որևէ կազմակերպությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը և այն հանդիսանում է վերջինիս առանձնահատուկ հատկանիշը, իսկ միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների որևէ կերպ փոխանցումը չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ պետության միջազգային իրավասությունների կորուստ, քանի որ ինքնիշխանությունը կարող է դադարել միմյան տվյալ պետության ժողովրդի կամաարտահայտման արդյունքում:

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի համակարգված վերլուծությունից և վերպետական միջազգային կազմակերպությունների որոշակի լիազորությունների փոխանցման պրակտիկայի հետազոտությունից ատենախոսությունում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ ա) միջազգային կազմակերպություններին անդամակցելիս վերջինիս փոխանցվում են գործառնական բնույթի այնպիսի լիազորություններ, որոնք կազմում են պետության ինքնիշխան իրավասության մաս, բայց ոչ ինքնիշխանության տարր, բ) սահմանադրական լիազորությունների փոխանցումը պայմանավորված է աշխարհաքաղաքական ժամանակակից պայմաններում միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք համընկնում են հենց պետությունների միջազգային ինտեգրմանն ուղղված խնդիրների հետ, գ) միջազգային հարաբերություններում կամ արտաքին քաղաքականության առանձին գործոնների ներգործության պայմաններում լիազորությունների փոխանցումն անհրաժեշտ է հենց պետության գործունեության համար կամ կապված է այնպիսի գործընթացների հետ, որոնք ոչ համաչափ ներգործություն կարող են ունենալ պետությունների վրա:

9. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջանակում և միջազգային իրավունքի նորմերի հետ դրանց հարաբերակցության տեսանկյունից պետության ինքնիշխանության սահմանադրաիրավական ժամանակակից ընկալումներին նոր բովանդակային իմաստ հաղորդելու նպատակով հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ չի կարելի միջազգային իրավունքը մշտապես դիտարկել որպես պրիմատ (գերակա) կամ պետության ինքնիշխանությունը բացարձակ անսահմանափակ:

Այս եզրահանգմամբ պայմանավորված հիմնավորվել են հետևյալ առաջարկությունները, ըստ որոնց, նախ, առաջարկվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 19-րդ հոդվածի և 81-րդ հոդվածի 1-ին մասերն ուժը կորցրած ճանաչել, այնուհետև, Սահմանադրության 204-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածով ամրագրված դրույթները հստակեցնելու ու դրանցում անհրաժեշտ ներքին հակասությունները բացառելու նպատակով նաև առաջարկվել է կամ ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 205-րդ հոդվածը, կամ Սահմանադրությունը լրացնել նոր 221-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 221. Մինչև Սահմանադրության 205-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության միջազգային պայմանագրերի գործողությունը շարունակում են մնալ ուժի մեջ մինչև այդ պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը»:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ բացահայտված հիմնահարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, առաջարկություններն ու հիմնավորումները կարող են նպաստել հայրենական

իրավական համակարգում ինքնիշխանության սահմանադրական ամրագրման և կարգավորման հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ինքնիշխանության երաշխիքների իրացման արդյունավետության բարձրացմանը:

Աշխատության գիտագործնական նշանակությունը ընդգծվում է հետագա սահմանադրական բարեփոխումների ուղղությունները և եղանակները վերանայելու և դրանք առավել իրատեսական ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ որոշակի եզրահանգումների առաջադրմամբ: Կարծում ենք, դրանք կարող են ունենալ համապատասխան կիրառական արժեք և կնպաստեն բազմաթիվ թերությունների վերացմանը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «Սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքներ», «Սահմանադրական վերահսկողություն» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է պետության ինքնիշխանության հիմնահարցերին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և մենագրությունում, իսկ դրանց առավել առանցքային նշանակություն ունեցող մասերը ներկայացվել են տարբեր բուհերում կազմակերպված գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված, ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ ու ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 9 ենթագլխից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, սահմանակից և գործնական նշանակությունը, ատենախոսության նորմատիվ, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև համառոտ տեղեկություն ատենախոսության կառուցվածքի մասին:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Ուտության ինքնիշխանության քաղաքական-իրավական բովանդակությունը, սկզբունքները և հատկանիշները. պատմատեսական և իրավական համեմատական վերլուծություն» վերառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից: **Առաջին ենթագլխում՝ «Ինքնիշխանությունը որպես քաղաքական և իրավական երևույթ. իրավաբանկալման հիմնախնդիրները և տեսական-իրավական վերլուծություն»** վերառությամբ, հեղինակը վերլուծելով տարբեր գիտական հայացքները և ուսումնասիրելով «ինքնիշխանություն» եզրույթի ծագումնաբանական նշանակությունը, կատարել է եզրահանգում, որ այդ եզրույթի նշանակությունն առավելապես պետք է դիտարկել որպես պետության քաղաքական ու իրավական կարևոր որակական բնութագիր և միաժամանակ պետության հատկանիշ:

Այս հիմնավորմամբ պայմանավորված հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումը, որ պետության ինքնիշխանությունն ունի քաղաքական-իրավական բնույթ, ընդ որում, եթե իրավական կողմը մատնանշում է ինքնիշխանության որպես պետության իրական, անհրաժեշտ ու որոշիչ հատկանիշի առկայությունը, ապա քաղաքական ինքնիշխանությունը դրսևորվում է իշխանության քաղաքական կամքի ինքնուրույնության միջոցով, որն արտահայտվում է այդ իշխանության և նրա մար-

մինների ինքնիշխան իրավունքների արտաքին ձևակերպումներում՝ իրավական ինքնիշխանության իրականացմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Ինքնիշխանությունը որպես սահմանադրական ինստիտուտ. սկզբունքները և հատկանիշները» վերտառությամբ, աստենախոսի կողմից հետազոտվում են սահմանադրական այդ ինստիտուտի սկզբունքներն ու հատկանիշները: Հեղինակի կարծիքով, էթե ինքնիշխանություն անօտարելիություն, անսահմանափակություն, իշխանության գերակայության, իշխանության անբաժանելիության և պետական ինքնիշխանության նկատմամբ ժողովրդական ինքնիշխանության առաջնայության սկզբունքներն ընկալվում են որպես հիմնարար ու ելակետային գաղափարներ, որոնց հենքի վրա բացահայտվում են ինքնիշխանության քաղաքական ու իրավական երևույթի էությունն ու բովանդակությունը, ապա իշխանության անկախության, պետական իշխանության միասնության ու գերակայության և ինքնիշխանության անսահմանափակության հատկանիշները իմաստային առումով դիտարկվում են որպես որակական ու առանձնահատուկ դրսևորման բնութագրիչներ:

Ընդհանրացնելով, հեղինակը կատարում է այն եզրահանգումը, որ ինքնիշխանության սկզբունքի իրացումն ենթադրում է նրա հատկանիշի դրսևորման առանձնահատկության սահմանում և վերջինիս հետ նրա անմիջական փոխկապակցում:

Երրորդ ենթագլխում՝ «Ինքնիշխանությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության համակարգում. ժողովրդական, ազգային ու պետական ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» ու «ազգային ինքնիշխանություն» հասկացությունների հարաբերակցության և դրանց բովանդակության բացահայտման ու իրենց գործնական նշանակության հիմնահարցերին:

Հեղինակի պնդմամբ, հենց ինքնիշխանության բովանդակության հիմնական համակարգային բաղադրիչի դերին են հավակնում պետական ինքնիշխանությունն ու ժողովրդի ինքնիշխանությունը, քանի որ ժողովրդին է վերապահված երկրի քաղաքական համակարգը, տնտեսական ու սոցիալական կարգերի հիմնական սկզբունքները սահմանելու գլխավոր ու անօտարելի իրավունքը: Այս հիմնավորման համատեքստում, ըստ հեղինակի, ակնհայտ է դառնում այն, որ պետական, ժողովրդական և ազգային ինքնիշխանություններն իրենց աստիճանակարգվածության (հիերարխիա) ու գործառնության շնչանակության մեջ միասնական են, ինչը նշանակում է, որ հենց ինքնիշխանությունը միակն է ու անբաժանելի, իսկ դրա սուբյեկտը կամ կրողը հանդիսանում են պետությունը, ժողովուրդը, ազգը:

Աստենախոսության երկրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և ինքնիշխանության բնութագրիչներն ու երաշխիքները» վերտառությամբ,, բաղկացած է երեք ենթագլուխներից: *Առաջին ենթագլխում՝*

«Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության բնութագրիչները և գործառնության նշանակությունը ներկայիս սահմանադրաիրավական ընկալման պայմաններում» վերտառությամբ, հեղինակի կողմից հետազոտվել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության բնութագրիչները (պետական ինքնիշխանություն, ժողովրդական ինքնիշխանություն և ազգային ինքնիշխանություն) և դրանց գործառնության նշանակությունը սահմանադրական ժամանակակից բարեփոխումների շրջանակում: Ընդհանրացնելով, հեղինակը գտնում է, որ, էթե պետության ինքնիշխանության հիշատակված երեք բնութագրիչները բովանդակային առումով համարժեք չեն, ապա դրանք սերտորեն փոխկապակցված են ու փոխգործակցում են միասնական համակարգում:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և դրանց իրականացման հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակի կողմից հետազոտվել են պետության ինքնիշխան իրավունքներն ու դրանց ընդհանուր սոցիալական նշանակությունը, գտնելով, որ այդ իրավունքների իրականացումը չպետք է հակառի քաղաքացիների անհատական իրավունքներին, քանի որ պետությունն իր իշխանությունը ձեռք է բերում քաղաքացիների հավա-

քական ընդհանրությունից՝ ժողովրդից, և վերջինիս է պատկանում իշխանությունը և, որն էլ հանդիսանում է նույն իշխանության աղբյուրը:

Այս տրամաբանության շրջանակում հեղինակը կատարում է եզրահանգում, ըստ որի՝ պետության ինքնիշխան իրավունքները հանդիսանում են ժողովրդի ինքնիշխան իրավունքների յուրատեսակ սահմանադրաիրավական գծագրում (պրո-յեկցիա) պետաիրավական և միջազգային-իրավական անմիջական պրակտիկայի ոլորտում, քանի որ պետությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում երաշխավորելով մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների գերակայությունը, այնուամենայնիվ, չի կորցնում իր ինքնիշխանությունը կամ այն չի իմաստագրվում:

Կատարված հետազոտության արդյունքում, հեղինակը պետության ինքնիշխան իրավունքները դիտարկում է որպես պետության ինքնիշխանության իրավաբանական բովանդակության տարր:

Երրորդ ենթագլխում՝ «Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքները» վերտառությամբ, հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել պետության ինքնիշխանության երաշխիքների իրավաբանական վերլուծությանը: Հեղինակը պետության ինքնիշխանության երաշխիքները դիտարկելով որպես ինքնիշխանության ապահովման այնպիսի միջոցներ, որոնցով պետությունը կանխարգելում կամ չեզոքացնում է իր ինքնիշխանության դեմ ուղղված հնարավոր կամ իրական սպառնալիքները: Ընդ որում, հեղինակի կարծիքով, այդ երաշխիքներին իրավական ձև հաղորդելն ինքնին կոչված է ապահովել մարդու իրավունքների իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը պետության կամայական միջամտությունից, ինչը բխում է ոչ միայն պետության շահերից, այլև հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության յուրահատուկ երաշխիք:

Հեղինակը բացահայտելով պետության ինքնիշխանության իրավական, քաղաքական, հոգևոր և տնտեսական երաշխիքների իրավական բովանդակությունն ու նշանակությունը, կատարում է հետևյալ եզրահանգումը, որ այդ երաշխիքների համատեքստում Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան պետության գոյության հիմնական կամ երաշխիքային կարևորություն ունեցող պայմաններ կարող են դիտարկվել պետական իշխանության գերակայությունը, պետության միասնությունն ու անկախությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ինքնիշխանության ժամանակակից հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Ուետական ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց լուծումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության պրակտիկային առնչվող պետության ինքնիշխանության երաշխավորման և միջազգային կազմակերպությունների վերպետականության հիմնախնդիրների հետազոտությանը:

Գարևորելով պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդրի առկայությունը, հեղինակը գտնում է, որ պետությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ իր ինքնիշխանությունը փոխանցել որևէ միջազգային կազմակերպությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը և այն հանդիսանում է վերջինիս հիմնական և առանձնահատուկ պատկանիչը:

Միաժամանակ, հետազոտելով այդ հիմնախնդրին առնչվող տարբեր մոտեցումները և միջազգային փորձը, հեղինակը կատարել է եզրահանգում, որ վերպետականությունը դիտարկվում է որպես միջազգային կազմակերպության իրավական այնպիսի հատկություն, որն ինքնիշխան անդամ-պետություններին հնարավորություն է ընձեռում ազգային օրենսդրությամբ իրենց իրավունքների մի մասը փոխանցել միջազգային կազմակերպությանը վերջինիս հիմնադիր պայմանագրով

նախատեսված նպատակների ու խնդիրների իրագործմանը, ընդ որում, հեղինակի կարծիքով, ընդ որում, նման իրավաձևակում առավել խնդրահարույց է այն, թե այդ կազմակերպության որոշումները մասնակից պետությունների համար պետք է դիտարկել որպես միջազգային իրավունքի, թե՛ ազգային օրենսդրության նորմեր:

Երկրորդ ենթազյխում՝ «Ինքնիշխանությունը և մարդու իրավունքների սահմանադրական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, հեղինակն անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ինքնիշխանության հիմնախնդիրն, գտնում է, որ անկախ սահմանադրական իրավունքների ամրագրման ձևից պետության սահմանադրական պարտականությունների իրականացումն ինքնին ընկալվում է որպես քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, նրանց օրինական շահերի պաշտպանության ապահովում և նյութական, քաղաքական ու հոգևոր պահանջ-մունքների բավարարում:

Հետագոտելով մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները հեղինակը կատարել է եզրահանգում, որ պետության լիազորություններն իրականացվում են այնպես, որ ապահովեն ժողովրդի իրական իշխանությունը և նրա կողմից պետության վերապահված ինքնիշխանությունը, համապատասխան տնտեսական, քաղաքական և իրավական պայմաններ ստեղծելու պայմանով: Չնայած այն հանգամանքին, որ այդպիսի պայմաններ և իրավական նախադրյալներ երաշխավորված են ՀՀ Սահմանադրության առանձին հոդվածներով, սակայն, հեղինակի կարծիքով, դրանք մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից որակական արդիականացման և դրանց սահմանադրաիրավական իրացման նոր կառուցակարգեր ստեղծելու կարիք ունեն:

Երրորդ ենթազյխում՝ «Ինքնիշխանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների համալտքստում» վերտառությամբ, հեղինակը ՀՀ Սահմանադրության համատեքստում վեր հանելով միջազգային հարաբերություններում պետության ինքնիշխանության սահմանափակումների հնարավոր դեպքերը, միաժամանակ, կարևորություն է տվել ինքնիշխանության սահմանադրական կարգավորման ժամանակակից միտումների ու հիմնախնդիրների հետազոտմանը:

Ընդհանրացնելով և համադրելով հետազոտության արդյունքները, հեղինակը ներկայացրել է որոշակի առաջարկություններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորումների շրջանակում ինքնիշխանության հասկացության սահմանադրաիրավական ժամանակակից ընկալումներին նոր բովանդակային իմաստ հաղորդելուն, ինչպես նաև պետության ինքնիշխանության և, հատկապես, միջազգային իրավունքի նորմերի հետ հարաբերակցության տեսանկյունից դրանց հարմարեցման (ադապտացման) ու նոր իրողությունների վերախմաստավորմանը այն առումով, որ չի կարելի միջազգային իրավունքը մշտապես դիտարկել որպես պրիմատ (գերակա) կամ պետական ինքնիշխանությունը բացարձակ անսահմանափակ:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները, մասնավորապես՝

1. Աշխատանքում անդրադարձ կատարելով ինքնիշխանության բովանդակության և քաղաքական իշխանության բնույթագրի միջոցով դրա էության բացահայտմանը, ինչպես նաև ինքնիշխանության ձևի ու բովանդակության միասնության ապահովման այն հիմնահարցերին, որոնք գիտագործնական մեծ նշանակություն ունեն քաղաքական և իրավաբանական ինքնիշխանությունների բնութագրումների ու միասնության տեսանկյունից, առաջադրվում են հետևյալ եզրահանգումները.

ա) յուրաքանկյուր պետության համար գոյություն ունեն ընդհանուր հատկանիշներ, որոնք բնութագրում են ոչ միայն կոնկրետ «պետությունը» իդեալական իմաստով, այլև որպես պետության քաղաքական և իրավական կարևոր որակական բնութագիր, արտահայտում են պետության գաղափարը և նպատակները, իսկ այդպիսի հատկանիշների բացակայությունն ինքնին կասկածի տակ է դնում այդպիսի պետության գոյությունն ընդհանրապես,

բ) ինքնիշխանությունը որպես պետության առանձնահատուկ հատկանիշ ընկալվում է որպես իշխանության իրավագործություն կրելու փաստացի հիմք ու դրա իրականացման իրական հնարավորություն և բնութագրվում է մեկը մյուսի հետ փոխկապակցված ու մեկը մյուսին փոխլրացնող հատկանիշների գերակայության կամ գերագույն իշխանության առկայության և ինքնուրույնության կամ արտաքին անկախության միասնությամբ, ինչը նշանակում է, որ ա) առանց սեփական գերագույն իշխանության, պետությունը չի կարող լինել անկախ միջազգային հարաբերություններում, բ) առանց անկախության պետական իշխանության գերակայություն գոյություն չունի, գ) պետության ինքնիշխանությունը պետք է իրականացվի առանց արտաքին սահմանափակումների բացառելով պետության քաղաքական ու իրավական գործընթացների նկատմամբ ինքնիշխան այլ սուբյեկտների միջամտությունը կամ ներգործությունը:

2. Ինքնիշխանությունը պայմանավորված է որոշակի սկզբունքների ու հատկանիշների առկայությամբ, քանի որ դրանք հնարավորություն են տալիս բացահայտել այդ եզրույթի ոչ միայն իմաստը, այլև բովանդակային առումով տարանջատել սահմանադրաիրական այլ երևույթների նշանակությունից: Ընդ որում, եթե ինքնիշխանության սկզբունքները դիտարկվում են այն հիմնարար ու ելակետային քաղաքականություն, որոնց հենքի վրա բացահայտվում են ինքնիշխանության որպես գաղափարական ու իրավական երևույթի էությունն ու բովանդակությունը, ապա ինքնիշխանության հատկանիշները իմաստային առումով հանդիսանում են որպես դրական ու առանձնահատուկ դրսևորման բնութագրիչներ, այսինքն, ինքնիշխանության սկզբունքը ենթադրում է նրա հատկանիշի դրսևորման առանձնահատկությունը:

Աշխատանքում կարևոր նշանակություն է տրվել ինքնիշխանության անօտարելիության, անսահմանափակության, իշխանության գերակայության, իշխանության անբաժանելիության և պետական ինքնիշխանության նկատմամբ ժողովրդական ինքնիշխանության առջնայնության սկզբունքներին: Ընդ որում, եթե ինքնիշխանության անօտարելիությունն ինքնին այդպիսին է և անփոփոխելի, կամ ինքնիշխանության անսահմանափակությունը ժողովրդավարության արժևորման տարր է, որի տարաբնույթ ընկալման դեպքում կարող է տեղիք տրվել կամայական դրսևորումների և ինքնիշխանության սահմանափակումների (տույնը վերաբերում է իշխանության գերակայությանն ու անբաժանելիությանը), ապա պետական ինքնիշխանության նկատմամբ ժողովրդական ինքնիշխանության առաջնայնության սկզբունքի իրացման պարագայում չի կարող ժողովրդի իշխանությունը հակադրվել պետությանը, որը տեսականորեն անհնարին է:

Ինչ վերաբերում է ինքնիշխանության հատկանիշներին, ապա դրանցից առավել էական են իշխանության անկախությունը, պետական իշխանության միասնությունն ու գերակայությունը, ինքնիշխանության անսահմանափակությունը: Ընդ որում եթե ինքնիշխանության անկախությունը նշանակում է արտաքին միջամտությունից ազատ պետական իշխանության իրականացում այդ իշխանության կողմից, որը միաժամանակ, ենթադրում է արտաքին անկախություն այլ պետության իշխանությունից, իսկ պետական իշխանության միասնությունն ու գերակայությունը մատանշում են, մի կողմից, պետական իշխանության մարմինների իրավասության ու լիազորությունների ամբողջականությունը և այդ մարմինների միասնականությունը, իսկ մյուս կողմից այդ իշխանության կողմի կամքի իրացման միջոցով արտահայտում ինքնիշխանության գերակայությունը, ապա ինքնիշխանության անսահմանափակությունը, բնավ չի ենթադրում բացարձակ անսահմանափակ լինելը, իսկ, եթե ինքնիշխանությունը սահմանափակված է, ապա դա արդեն ինքնիշխանություն չի հանդիսանում:

3. Մասնաճարակական իրավունքի նորմերի համեմատական և համալիր վերլուծությունները ցույց են տալիս, որ թեև Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը որպես սահմանադրական սկզբունք, ձևականորեն ամրագրված է միայն ՀՀ Մասնաճարակության Նախաբանում և 1-ին հոդվածում, սակայն գործնականում այն իրականացվում է սահմանադրական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների

նորմերով և կանխորոշում է սահմանադրաիրավական ողջ համակարգն ու դրա պետական կարգավորման սկզբունքների բովանդակությունը:

4. Անդրադառնալով ժամանակակից իրավագիտության մեջ առանցքային նշանակություն ունեցող ժողովրդական ինքնիշխանության, ազգային ինքնիշխանության ու պետական ինքնիշխանության հարաբերակցության հիմնահարցին, աշխատանքում կարևորվել է այն, որ, եթե ժողովրդական ու պետական ինքնիշխանությունը ժողովրդավարական պետությունների պարագայում կարող են համընկնել, ապա քաղաքական այլ ռեժիմների ժամանակ դրանք կարող են չհամընկնել: Հենց այդ հիմնավորմամբ պայմանավորված պետական իշխանության ինքնիշխանությունն ունի ածանցյալ բնույթ, սակայն, եթե պետական իշխանության մեջ արտահայտվում է ողջ ժողովրդի ու պետության կամքը, ապա ժողովրդի ինքնիշխանությունը իրենից ներկայացնում է ժողովրդի կողմից պետական ողջ իշխանության իրավաբանորեն ու փաստացի տնօրինում, քանի որ ժողովուրդն է հանդես գալիս իբրև այդ իշխանության միակ աղբյուրն ու կրողը: Այս հիմնավորմամբ կարելի է պնդել, որ ժողովրդի ինքնիշխանությունը հանդես է գալիս որպես պետական իշխանության ինքնիշխանության հիմք, իսկ, եթե ժողովուրդը կորցնում է ինքնիշխանությունը, ապա պետական իշխանությունն ինքնաբերաբար կորցնում է իր ինքնիշխան բնույթը:

Միաժամանակ, «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» ու «ազգային ինքնիշխանություն» հասկացությունների հարաբերակցության մեջ առավել խնդրահարույց է ազգային ինքնիշխանության իբրև ինքնիշխան ազգի բարձրագույն անօտարելի իրավունքի էության բացահայտման հիմնահարցը: Ընդ որում, եթե ազգային ինքնիշխանությունը ժողովրդական ինքնիշխանության ունեցող զարգացած երկրներում, ապա անհրաժեշտ է նաև հաշվի առնել ազգային ինքնիշխանության իբրև Էթնիկ ընդհանրության ինքնապաշտպանության իրավունք, որն ընկալվում է նաև որպես ազգի ինքնորոշման իրավունք:

Այս ընդհանրացումից ելնելով աշխատանքում կարևոր նշանակություն է տրվել այն գաղափարին, որ ազգը չի կարող իրականացնել սեփական լիարժեք ու քաղաքական ազատություն՝ առանց որոշակի պետական կազմակերպության ու դրա իշխանական կառույցների: Այստեղից, եթե այդ եզրույթները բովանդակային առումով համարժեք չեն, ապա դրանք սերտորեն փոխհարկավորված են ու փոխգործակցում են միասնական համակարգում, և այդպիսի միասնականությունն ենթադրում է, որ ինքնիշխանության սուբյեկտն ու կրողը միաժամանակ հանդիսանում են պետությունը, ժողովուրդը, ազգը:

5. Աշխատանքում առաջադրված է նաև այն եզրահանգումը, որ պետությունն իր ինքնիշխան իրավունքները տիրապետում է սեփական կամքով, այլ ոչ թե որևէ պետության կամ այլ սուբյեկտի որոշմամբ, ինչը ենթադրում է, որ ինքնիշխան իրավունքներ կարող է կրել այն պետությունը, որն ինքնուրույն սահմանում է սեփական իրավական կարգավիճակը, մի կողմից, իսկ, մյուս կողմից, պետության ինքնիշխան իրավունքներն ընկալվում են որպես պետության ինքնիշխանության իրավաբանական բովանդակություն տարր:

Այս հիմնավորմամբ պայմանավորված առաջադրված է այն բնորոշումը, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքներն ընկալվում են պետության այնպիսի իրավունքներ է) որոնք ձեռք են բերվել սեփական կամքով, բ) մարմնավորում են պետական իշխանության անկախության և լիիշխանության իրացումը, գ) որոնց ցանկը անսպառ է, դ) պատմական կոնկրետ ժամանակաշրջանում հայ ժողովրդի պահանջումներով է կանխորոշվում այս կամ այն իրավունքի առկայությունը: Ակնհայտ է նաև այն, որ, եթե Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքներն իրականացվում են հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտներում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա (Մահմանադրության հոդվ. 4), ապա պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց վերապահվում է միայն այնպիսի գործողություններ կատարելու իրավասությամբ, որոնց համար նրանք լիազորված են Մահմանադրությամբ կամ օրենքներով (Մահմանադրության հոդվ. 6, մաս 1):

Բացի այդ, հետազոտության առարկայի տրամաբանության շրջանակում սահմանադրական հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից բխել է, որ, եթե պետության ինքնիշխան իրավունքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, ապա պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները դիտարկվում են որպես տվյալ սահմանադրական մարմնի իրավական կարգավիճակի տարր: Այստեղից, պետական մարմինների լիազորություններն ամանցվում են պետության ինքնիշխան իրավունքներից և վերջիններիս նկատմամբ ունեն երկրորդային նշանակություն: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները չեն կարող դիտարկվել որպես պետության իրավասություն, քանի որ դրանք ոչ բոլոր դեպքերում են արտացոլված օրենսդրության մեջ կամ որոշված չի դրանց իրացման կարգը, հետևաբար, այդ իրավունքները չեն կարող իրացվել Հայաստանի Հանրապետության իրավասության շրջանակում, սակայն դիտարկվում են որպես պետության իրավասության ու լիազորությունների ձևավորման հիմք:

6. Աշխատանքում հանգամանորեն ներկայացված են պետության ինքնիշխանության երաշխիքները, որոնք կարող են բացառել կամ առնվազն մեղմել բացասական երևույթների հետևանքները: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքների դասակարգումը և դրանց իրավաբանական վերլուծությունը վկայում են, որ դրանց իրավական ձև հաղորդելն ինքնին անհրաժեշտ ու կարևոր գործընթաց է, որը կոչված է ապահովել մարդու իրավունքների իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը պետության կամայական միջամտությունից, ինչը բխում է ոչ միայն պետության շահերից, այլև հանդիսանում է մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության յուրահատուկ երաշխիք: Մասնավորապես, պետության ինքնիշխանության երաշխիքների բովանդակությունը դրսևորվում է պետական իշխանության գերակայության, նրա միասնության և անկախության մեջ, ինչն, ենթադրաբար համարժեք է այն եզրահանգման հետ, որ ինքնիշխանության իրավական երաշխիքների ապահովումն ունի այն նույն նշանակությունը, ինչ իրավական բովանդակությունը: Այս համատեքստում, Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան պետության գոյության հիմնական կամ երաշխիքային նշանակություն ունեցող պայմաններ կարող են դիտարկվել պետական իշխանության գերակայությունը, պետության միասնությունն ու անկախությունը:

Միաժամանակ, պետական իշխանության միասնականության ապահովման հիմնախնդիրն առաջին հերթին պայմանավորված է հենց պետության ինքնիշխանության իրավական երաշխիքների միասնությամբ: Այդպիսիք փոխկապակցվում են իրավական միասնական պետության մեջ դրանց գոյության հետ, որոնք հռչակվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով և բխում են 3, 6, 10, 11-րդ և այլ հոդվածների բովանդակությունից: Տվյալ դեպքում բացի միասնական իրավական ու տնտեսական տարածքից, խոսք կարող է գնալ նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ժողովրդի շահերից ելնելով պետական իշխանության իրականացման երաշխավորման մասին:

Իսկ ինքնիշխանության քաղաքական երաշխիքների ապահովման հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետության իշխանությունը առանց քաղաքական համակարգի այլ սուբյեկտների հետ փոխգործակցության և բարոյահոգեբանական այլ գործունեի հաշվառմամբ, չի կարող իրականացնել պետական ու հասարակական գործերի անկախ և բարձրագույն կառավարում: Ընդ որում, գիտագործնական մեծ նշանակություն ունեն պետության ինքնիշխանության քաղաքական այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են ժողովրդական ինքնիշխանությունը, քաղաքացիական հասարակության թաղայությունը և այլն:

Ինչ վերաբերում է ինքնիշխանության հոգևոր երաշխիքներին, ապա անհրաժեշտ է նկատել, որ պետական ինքնիշխանության պաշտպանվածության լիարժեքությունն առաջին հերթին պայմանավորված է պետության նկատմամբ իր ժողովրդի վերաբերմունքով և նույն ժողովրդի համախմբվածությամբ, ինչն ենթադրում է, որ իրավական երևույթների ուսումնասիրությունն անհնար է առանց հասարակության քաղաքական ու իրավական գիտակցության հաշվառմամբ: Տվյալ դեպքում, խոսք

կարող է գնալ պետության և հասարակության կողմից մշտապես իրականացվող կազմակերպչիրավական այն միջոցառումների և դրանց կառուցակարգերի մասին, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հայրենասիրական զգացմունքների ու գիտակցության համակարգային կապի առկայությունը:

Պետական ինքնիշխանության տնտեսական երաշխիքներն այն տնտեսական գործոնների համախումբն է, որոնք կոչված են նպաստելու տնտեսական հարաբերություններում պետական իշխանության ինքնիշխան հատկությունների իրացմանը, ինչպես նաև ստեղծելու առավել բարենպաստ պայմաններ պետության և հասարակության տնտեսական գործունեության իրականացման համար: Այդ առումով, Հայաստանի Հանրապետությունում հանրային և մասնավոր շահերի հարաբերական հաշվեկշռվածության ապահովման համար անհրաժեշտ տնտեսական բարենպաստ պայմանների ստեղծումն ու երաշխավորումը դիտարկվում է որպես պետության քաղաքական և տնտեսական կայունության ապահովման կարևոր պայման:

7. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերապետականության հարաբերակցության հիմքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ իր ինքնիշխանությունը փոխանցել որևէ կազմակերպությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը և այն հանդիսանում է վերջինիս հիմնական հատկանիշը, իսկ միջազգային կազմակերպություններին պետության ինքնիշխան իրավունքների որևէ կերպ փոխանցումը չի կարող դիտարկվել որպես ինքնիշխանության բացարձակ սահմանափակում կամ պետության միջազգային իրավասուլեկտության կորուստ, քանի որ պետության ինքնիշխանությունը կարող է դադարել միմիայն տվյալ պետության ժողովրդի կամաարտահայտման արդյունքում:

8. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության տրամաբանության համատեքստում աշխատանքում ներկայացվել են միջազգային կազմակերպությունների վերապետականությունը բնութագրող հետևյալ բնութագրիչները. ա) անդամ-պետությունների շահերի ընդհանրության ճանաչումը, բ) անդամ - պետությունների մեծամասնությամբ որոշումների ընդունումը, գ) ծառայողների գործունեության անկախությունը, դ) ֆինանսական անկախությունը, ե) որոշումների պարտադիր կատարման պայմանը անդամ-պետությունների կողմից և անդամ-պետությունների տարածքում, զ) վերապետական կազմակերպության կազմից միակողմանի դուրս գալու արգելքը, է) այդ կազմակերպության լիազորությունների գերակայությունը անդամ-պետությունների լիազորությունների նկատմամբ, ը) անդամ-պետությունների ինքնիշխան լիազորությունների մի մասի փոխանցումը վերապետական կազմակերպությանը: Ընդ որում, տարբեր երկրների սահմանադրական նորմերի համակարգված վերլուծությունից և նման լիազորությունների փոխանցման պրակտիկայի հետազոտությունից հետևում է, որ ա) միջազգային կազմակերպություններին փոխանցվում են գործառնական բնույթի այնպիսի լիազորություններ, որոնք կազմում են ինքնիշխան պետության իրավասության մաս, բայց ոչ ինքնիշխանության տարր, բ) սահմանադրական այդպիսի լիազորությունների փոխանցումը պայմանավորված է գլոբալիզացիայի խորացման պայմաններում հատկապես միջազգային ինտեգրման նոր բնույթի գործընթացներ իրականացնող միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են կամ համընկնում են հենց անդամ-պետությունների խնդիրների հետ, գ) նման լիազորությունների փոխանցումն անհրաժեշտ է, քանի որ հատկապես միջազգային հարաբերություններում քաղաքականության կամ առանձին արտաքին գործունեության ներգործության պայմաններում դրանք անհրաժեշտ են պետության գործունեության համար կամ կապված են բարդ գործընթացների հետ, որոնք ոչ համաչափ ներգործություն են ունենում պետությունների վրա:

9. ՀՀ Սահմանադրությունը հաստատում է պետության և մարդու ու քաղաքացու միջև հարաբերությունների հիմնարար հիմքերը, իսկ այդ փոխհարաբերություններում ժողովրդական ինքնիշխանությունը դիտարկվում է պետական ինքնիշխանության, դրա գերակայության, անկախության և ինքնուրույնության հիմքը: Սակայն,

պետության և ժողովրդի փոխհարաբերությունները չեն կարող բնութագրվել որպես իրավահավասար: Ակնհայտ է, որ ժողովուրդը հանդիսանում է ինքնիշխանության միակ կրողը, հետևաբար, նրան է վերապահված պետական իշխանության նկատմամբ նրա գերակա դերակատարումը: Այստեղից, Հայաստանի Հանրապետության սահմանադրական պարտավորությունները բնութագրվում են առանձնահատուկ սոցիալական և շջանակությամբ, քանի որ հասկանալի դրույթ են երաշխավորում և սահմանադրական կառուցվածքի կայունությունը, և հասարակության ժողովրդավարական ինստիտուտների արդյունավետությունը, և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովումը:

10. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) ինքնիշխանության վերաբերյալ սահմանադրական նորմերը որևէ փոփոխությունների չեն ենթարկվել, այնուամենայնիվ, հայրենական և արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի զարգացման առումով նոր բովանդակային իմաստ է հարորդվել ինքնիշխանության հասկացության սահմանադրաիրավական ժամանակակից ընկալումներին հատկապես համակարգային առումով փոխկապված այլ հոդվածների շրջանակում: Մասնավորապես, Սահմանադրության 3, 204 և 205-րդ հոդվածներով ամրագրված նորմերի տրամաբանությամբ համապատասխան վերալետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության կամ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը վերաբերող հարցերի լուծումը դուրս է գալիս պետական ինքնիշխանության իրացման շրջանակից և դիտարկվում որպես ժողովրդական ինքնիշխանության իրացման առարկա: Սակայն, այն դեպքում, երբ անհրաժեշտ է նույն հարցերի կապակցությամբ քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքների նախագծերի վերաբերյալ հարցերը հանրաքվեի միջոցով լուծել, ապա այդ հարցերն արդեն ժողովրդական ինքնիշխանության իրացման շրջանակից դուրս են գալիս և անցնում պետական ինքնիշխանության իրացման տիրույթ: Այստեղից, վերալետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող հարցի լուծման օբյեկտիվ անհրաժեշտությունը առաջադրում են այդ հարաբերություններին բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծումներ, ինչը և միջազգային, և սահմանադրաիրավական հարաբերություններում անհրաժեշտ է դիտարկել որպես պետությունների վերալետական գործակցության նոր ձև, որտեղ յուրաքանչյուր ինքնիշխան երկիր ինքնակամ մասնակցելով վերալետական կազմակերպություններին, իրենց մասնակցության կամքի արտահայտման միջոցով ապահովում է իր իսկ ինքնիշխանության և ազգային շահերի պաշտպանության երաշխավորումը:

11. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1, 4, 13, 14, 19, 53, 54, 61, 81 և 116-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ ինքնիշխանությունը որպես պետության անքակտելի հատկանիշ բնութագրում է Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը: Այն ենթադրում է, որ պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում և այն տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառելով երկիշխանությունը, և իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական լիարժեք իշխանություն: Այսինքն, նշված հոդվածների բովանդակային իմաստը հաստատում է պետության բացարձակ ինքնիշխանության մասին:

12. Աշխատանքում առաջադրված է այն եզրահանգումը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) մեկնաբանվող հոդվածների համատեքստում պետության ինքնիշխանությունը միջազգային հարաբերություններում կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների հետևյալ դեպքերում. ա) երբ Հայաստանի Հանրապետությունը կամավոր ստանձնում է միջազգային պարտավորություններ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով (բխում Սահմանադրության 13-րդ հոդվածի բովանդակությունից), բ) երբ Հայաստանի Հանրապետությունը կամավոր մասնակցում (վավերացնում, հաստատում, ստորագրում)

երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերին (բխում է Մասնա-նադրության 5, 19, 116, 132-րդ և այլ հոդվածների բովանդակությունից), գ) երբ Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է միջազգային կազմակերպու-թյուններին ստանձնելով որոշակի պարտավորություններ (բխում է Մասնա-նադրության 13, 205-րդ և այլ հոդվածների բովանդակությունից), դ) երբ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված որոշումները ենթակա են պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետության կողմից (բխում է Մասնա-նադրության 5, 13, 19, 81, 116-րդ և այլ հոդվածների բովանդակությունից), ե) երբ Հայաստանի Հանրապետությունը ընդունում է միջազգային իրավունքի գերակայությունը ազգային օրենսդրության նկատմամբ (բխում է Մասնա-նադրության 13-րդ հոդվածի բովանդակությունից): Այս համատեքստում կարևորվում է այն, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջա-նկում վերախմաստավորվում է պետության ինքնիշխանությունը և, հատկապես, միջազգային իրավունքի նորմերի հետ հարաբերակցության տեսանկյունից նոր իրողությունների հետ դրա հարմարեցման (ադապտացման) ուղղությամբ, և չի կա-րելի միջազգային իրավունքը մշտապես դիտարկել որպես պրիմատ (գերակա) կամ պետության ինքնիշխանությունը բացարձակ անսահմանափակ:

Թեկնածուական ստեղծագործության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները (Մաս-նա-նադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում). **Մեծագրություն.**, – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2016. 10 տ.մ.,

2. Ինքնիշխանությունը որպես սահմանադրական ինստիտուտ. սկզբունքները և հատկանիշները // ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Գիտական հոդվածների ժողովածու, 2014, էջ 30-38,

3. Ինքնիշխանությունը որպես քաղաքական և իրավական երևույթ. Իրավաբնկա-վան հիմնախնդիրները և տեսական-իրավական վերլուծություն // ՀՀ պետական կա-ռավարման ակադեմիայի 2014 թվականի մարտի 27-28-ի միջբուհական գիտական նյութերի ժողովածու, Հանրային կառավարում, 2014, թիվ 5, էջ 43-51,

4. Ժողովրդական, ազգային ու պետական ինքնիշխանությունը. տեսական-իրա-վական վերլուծություն և հարաբերակցության հիմնախնդիրները // Եվրոպական ակա-դեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, 2014, թիվ 5/1, էջ 105-108,

5. Ինքնիշխանությունը սահմանադրական իրավունքի գիտության համակարգում. տեսական-գործնական հետազոտություն // Եվրոպական ակադեմիա, Գիտական հոդ-վածների ժողովածու, 2014, 5/1/, էջ 109-111,

6. Պետական ինքնիշխանության և միջազգային կազմակերպության վերպետակա-նության հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց լուծումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում // Արդա-րադատություն, 2015, թիվ 2/29/, էջ 64-69,

7. Ինքնիշխանությունը և մարդու իրավունքների սահմանադրական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում // ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազ-գային կենտրոն, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, էջ 126-131,

8. Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և դրանց իրացման հիմնախնդիրները // Եվրոպական ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, թիվ 6, էջ 273-288,

9. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության բնույթագրիչները և գործա-ռության նշանակությունը ներկայիս սահմանադրաիրավական ընկալման պայման-ներում // Հանրային կառավարում, 2015, թիվ 1, էջ 114-123,

10. Հայաստանի Հանրապետությունում ինքնիշխանության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում // Արդա-րադատություն, 2016, թիվ 1/32/, 10 էջ (գտնվում է տպագրման փուլում),

11. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքները // Եվրոպա-կան ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, թիվ 6, էջ 289-303:

ХАЧАТРЯН АРАМ АШОТОВИЧ

**ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ
СУВЕРЕНИТЕТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право”.

Защита диссертации состоится 18 марта 2016 года, в 16:00 часов на заседании специализированного совета ВАК Республикой Армения 041 по юриспруденции при Академии государственного управления Республикой Армения
(0028, г. Ереван, ул. Киевяна 8).

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации обусловлена функциональной ролью вопроса государственного суверенитета, искажением содержания его границ, отсутствием целостности правового подхода в вопросе суверенитета в отечественной правовой системе, недостаточной проработанностью нормативно-правового восприятия правовых явлений, необходимостью поиска систематизированных решений и обозначения текущих проблем с точки зрения конституционного регулирования государственного суверенитета и суверенных прав Республики Армения.

В работе автор проанализировал правовое содержание государственного суверенитета и проблем конституционного регулирования, теоретико-правового значения данного института в науке конституционного права, а также проблем его функциональной роли в современных условиях углубления международной интеграции и геополитических процессов.

Автор в диссертации осуществил комплексные исследования по проблемам соотношения суверенитета и суверенных прав Республики Армения, а также государственного суверенитета и надгосударственных международных организаций.

Структура имеющей научно-практическое значение диссертации, дала возможность автору рассмотреть почти все связанные с темой проблемы.

В первой главе автор подробно представил правовое содержание суверенитета государства, как правового и политического явления, затронул проблемы принципов и критериев суверенитета, как конституционного института, а также исследовал проблемы соотношения государственного, народного и национального суверенитетов.

Во второй главе диссертации автор обратился к изучению гарантий и правовых критериев суверенитета государства и их функциональному значению, а также осуществил исследование концептуальных подходов определения суверенных прав Республики Армения и проблем их реализации.

В третьей главе диссертации исследованы правовые проблемы соотношения суверенитета Республики Армения и надгосударственных международных организаций в контексте современного конституционного регулирования и их решения, как в международно-правовой практике, так и в практике конституционного правосудия.

Основные результаты исследования были отражены в монографии и научных статьях. В то же время автор на основе рассмотрения исторического опыта выдвинул теоретические положения концептуального и практического характера, которые могут быть использованы для усовершенствования конституционных норм Республики Армения.

Необходимо отметить, что все выводы данной диссертационной работы построены на четких источниковедческих и методологических основах.

Исходя из целей исследования, были выдвинуты некоторые актуальные задачи и представлены авторские замечания и необходимые выводы, которые вытекают из логического хода этого исследования и аргументированы надлежащим образом.

Диссертация имеет научно-ориентированное направление и является аналитическим научным исследованием.

KHACHATRYAN ARAM

THE PROBLEMS OF SOVEREIGNTY CONSTITUTIONAL REGULATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation for Ph.D. in Law on the specialization of 12.00.02 “Public Law”

The defence of the dissertation will be held on 18 march 2016, at 16:00, at the session of the specialized council 041 on Jurisprudence the Supreme Certifying Commission of the Republic of Armenia at the Public Administration Academy of the the Republic of Armenia (0028, Yerevan, Kievyan st. 8)

SUMMARY

The vitality of the thesis topic is conditioned with the fuctional role of state sovereignty, distortion of content boundaries of sovereignty, absence of integral legal approaches of sovereignty in the domestic legal system, incomplete legal perception of legal phenomena, necessity of finding systematized solutions to outlined current problems in terms of constitutional new regulations concerning sovereignty and sovereign rights in the Republic of Armenia.

The author analyzed and did integrated research on the legal content of state sovereignty and the problems of its constitutional regulation, the place and role of this institution in the science of constitutional law. The state sovereignty’s functional role in the current conditions of legal perception and in the context of constitutional reforms is discussed in the deepening conditions of international integration and geopolitical processes. The constitutional institution's principles, characteristics and functional role, guarantees and constitutional arrangements of their realization are covered as a sovereignty of the Republic of Armenia. The problems concerning the sovereignty and sovereign rights of the Republic of

Armenia as well as state sovereignty and international organizations over-statehood correlation issues are discussed in the thesis.

The thesis structure having scientific-practical importance enabled the author to discuss almost all the problems concerning the topic. In the first chapter, the author presented the legal content of the state sovereignty as a legal and political phenomenon as well as touched upon the problems concerning sovereignty principles and criteria as a constitutional institution. The correlation problems of state sovereignty, people's and national sovereignties are discussed as well. In the second chapter of the thesis the author studied the state sovereignty guarantees and legal criteria as well as their functional importance.

The definition of the sovereign rights of the Republic of Armenia as well as their implementation problems and concept approaches to their solutions are reviewed. In the third chapter the legal problems concerning the RA sovereignty and international organizations' over-statehood in the context of legal problems' current constitutional regulation and their solution, in the international, legal and constitutional justice practice are investigated.

The research results are reflected in the thesis summary and scientific articles. The author highlighted theoretical provisions having conceptual and functional character based on empirical experience.

These are the provisions that may be used to improve constitutional norms of the Republic of Armenia. It should be mentioned that all the conclusions on the thesis are based on the clear empirical facts and methodology.

Based on the research goals some vital problems are discussed and the necessary conclusions and remarks arising from the logical approach of the research are made by the author and are proved properly.

The thesis has scientific-orientation direction and is an analytic-scientific research.